ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

«22» 07 2021 թ.

№ 520-Ա

ք. Երևան, Տերյան փող., 44, Հեռ.՝ (+374 11) 518 401
Էլ. փոստ՝ kentron@yerevan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության առաջատար մասնագետ Հ.Մարգարյանի կողմից 21.06.2021թ. կազմված 038838վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու վարչական տույժ նշանակելու համար նյութեր նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 22.07.2021թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 21.06.2021 կազմված թիվ 038838 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որի համաձայն՝ <<ՌՈՒԼԵՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահե Քամալյանի կողմից 07.06.2021 թվականին Երևան քաղաքի Մոսկովյան թիվ 28 հասցեում առանց համապատասխան թույլտվության մեկ տարվա ընթացքում կրկին իրականացվել է բացօթյա առևտուր:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում պարզեց, որ <<ՌՈՒԼԵՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահե Քամալյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 169.16-րդ

հոդվածի 4-րդ մասով /առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը/ նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 169.16-րդ հոդվածի 4-րդ մասով, 219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. <<ՌՈՒԼԵՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահե Քամալյանին Օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 70.000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել <<ՌՈՒԼԵՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահե Քամալյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 70.000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձանպետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի <<ՌՈՒԼԵՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահե Քամալյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով /ՀՀ վարչական դատարան/ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ